

## «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ տարիների պատմությունը

**2007թ.** ընկերությունը, ընդառաջ գնալով օրենսդրական փոփոխություններին, վերալիցենզավորվել է և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացել ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա ԱՊՈ 0005 (0014):

**2009թ.** Ֆինանսական տարվա արդյունքներով եղել է միակ ապահովագրական ընկերությունը, որն ընդգրկվել է 400 խոշոր հարկատուների ցուցակում, ինչը ևս մեկ անգամ վկայում է ոլորտի առաջատարը լինելու և թափանցիկ ու օրինական աշխատելաճճի մասին:

**2010թ.** օգոստոսի 13-ին «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ դարձել է [«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»](#) ԻԱՄ հիմնադիր անդամ՝ իրավունք ստանալով իրականացնելու ԱՊՊԱ:

**2011թ.**

- Ֆինանսական կայունության և վճարունակության բարձր մակարդակի ապահովման նպատակով ընկերությունը համալրեց կանոնադրական կապիտալը 200 մլն ՀՀ դրամով՝ հասցնելով այն 949,404,860 ՀՀ դրամի:
- Նոյեմբեր ամսին «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՀՀ բոլոր մարզերում բացեց ապահովագրական հայցերի կարգավորման և հաճախորդների սպասարկման գծով մասնագիտացված 12 նոր ներկայացուցչություններ՝ 2 մասնագիտացված մասնաճյուղերի, ավելի քան 400 սպասարկման կետերի և ամենախոշոր գործակալական ցանցի հետ միասին ապահովելով ամենալայն սպասարկման ցանցը ՀՀ տարածքում:

**2012թ.**

- Իր հաճախորդների վստահության և բարձր գնահատանքի շնորհիվ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ Տարվա լավագույն ապրանքանիշ ազգային մրցանակաբաշխության կողմից կատարված հետազոտության արդյունքներով ճանաչվել է **«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ»**:
- Ֆինանսական կայունության և վճարունակության բարձր մակարդակի ապահովման նպատակով Ընկերության կանոնադրական կապիտալը համալրվել է 701,247 հազար ՀՀ դրամով՝ հասցնելով այն 1,650,652 հազար ՀՀ դրամի:

## 2013թ.

- Ֆինանսական կայունության և վճարունակության բարձր մակարդակի ապահովման նպատակով Ընկերությունը կանոնադրական կապիտալը համալրվել է 885,640 հազար ՀՀ դրամով՝ հասցնելով այն 2,536,260 հազար ՀՀ դրամի:
- [«Բյուրո Վերիտաս»](#) ընկերության կողմից անցկացված աուդիտի արդյունքներով հաստատվեց, որ ընկերության բոլոր բիզնես գործընթացները համապատասխանում են միջազգային ստանդարտներին և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ շնորհվեց որակի կառավարման **ISO 9001:2008 սերտիֆիկատ**:

## 2014թ.

- Ընկերությունը ապահովագրական շուկայում ներդրել է մի քանի նոր պրոդուկտ, մասնավորապես՝ «**ԿԱՍԿՈ տարվա եղանակներ**» և «**Կանանց ԿԱՍԿՈ**», որոնք նախատեսված են ֆիզիկական անձ հաճախորդների համար, ինչպես նաև «**Ընտանիքի ֆինանսական կայունության ապահովագրություն**» պրոդուկտը, որը նաև նորամուծություն էր դժբախտ պատահարներից ապահովագրության շուկայում:
- Ընկերությունը հանդիսանում է ապահովագրական շուկայի առաջատարը գույքի, ճամփորդական աջակցության, տարերային աղետներից գույքի, առողջության, դժբախտ պատահարներից ապահովագրության ոլորտներում:

## 2015թ.

- «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն արժանացել է Հայաստանի Հանրապետության առևտրաարդյունաբերական պալատի «**Մերկուրի**» մրցանակին «**Համաչափ և կայուն զարգացող ընկերություն**» անվանակարգում:
- Շարունակելով իր ակտիվ գործունեությունը կրթական ոլորտում՝ Ընկերությունը Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ապահովագրական գործ» մասնագիտության ուսանողների համար անց է կացրել վարպետության դասընթացներ:

2016թ.

- Երկրորդ անգամ անընդմեջ Ընկերությունը ճանաչվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի հետ համագործակցող լավագույն ապահովագրական ընկերություն, ինչը վկայում է ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ-ի հաճախորդամետ գործելաոճի մասին:
- Դեկտեմբեր ամսին Մոսկվայում «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ շնորհվել է «Տարվա լավագույն դուստր ընկերություն» տիտղոս ԻՆԳՈ խմբի ընկերությունների ցանկում: